ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ

ՄԱՐԶՊԵՏ

<<28 >> << հոկտեմբեր>> 2016 թ N 114

ք. Եղեգնաձոր

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 94-րդ հոդվածի 2-րդ մասով, 95-րդ հոդվածի 2-րդ մասով, 109-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6, 1.16 կետերի պահանջներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N319-Ն որոշմամբ հաստատված «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգի » 34-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի <<Քարագլխի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի նախագահի 2016 թվականի հոկտեմբերի 27-ի գրությունը և Արման Հովհաննիսանի հետ կնքած 2016 թվականի օգոստոսի 24-ի N301 ժամկետային աշխատանքային պայմանագրի 6.1 կետի ա) ենթակետը և Արման Հվհաննիսյանի դիմումը.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1.2016 թվականի հոկտեմբերի 28-ից Արման Հովհաննիսյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի <<Քարագլխի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնում, նրա հետ կնքելով ժամկետային աշխատանքային պայմանագիր՝ 5 /հինգ/ տարի ժամկետով:

2. Լուծել Արման Հովհաննիսյանի հետ կնքած 2016 թվականի օգոստոսի 24-ի N301 ժամկետային աշխատանքային պայմանագրը.

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հ. ՍԱՐԳՍՅԱՆ